անասնապահութեան, որը ժողովրդի գլխաւոր պարապմունքն է: Ամենաջերմ ամառները միայն կարող են հալել մշտական ձիւնը սարերի գագաթից. օդը տոգորուած է կազդուրիչ խոնաւութեամբ, եւ ձորերի միջով վազող վտակները եւ աղբիւրները երբեք չեն ցամաքում:

Հաղբակայ սարերի վրայ եւ ձորերի մէջ ցրուած են հայոց բազմաթիւ գիւղեր, որոնք ներկայացնում են մարդու կեցութեան խորին-նախնական դրութիւնը: Գետնափոր տները՝ զանազան ոլորմոլոր ուղղութեամբ՝ տարուած են հողի տակով եւ ձեւացնում են կատարեալ լաբիրինթոս. նրանց մէջ իրանց անասունների հետ բնակւում են մարդիկ պարզ, խաղաղական կեանքով: Ամենափորձեալ աչքն անգամ չէ կարող որոշել գետնափոր խրճիթները հողի տափարակ մակերեւոյթից, միայն վաղորդեան ծուխը, երթիկների ծակերից դուրս հոսող ծուխը յիշեցնում է՝ թէ այն ստորերկրեայ խորշերի մէջ ապրում են մարդիկ...

Գարնան սկզբից բնակիչները իրանց հոտերի հետ գաղթում են դէպի հեռաւոր սարերի արօտները, այնտեղ ապրում են վրանների տակ մինչեւ աշնան վերջը: Գիւղերը համարեա թէ դատարակւում են տղամարդերից, գերդաստանի ծերունիքը միայն մնում են հսկելու տներին, որ ազատ պահեն նրանց չար ձեռքերի հրդեհելուց:

Բացի հայերից, Հաղբակայ սարերի վրայ թափառում են քրդերի զանազան խաշնարած ցեղեր, որոնք չունեն հաստատ բնակութիւն, այլ տարուայ տաք ամիսները անցուցանում են բաց օդի տակ, իսկ ձմեռը զետեղւում են հայերի գիւղերում, եւ ամէն մի հայ ընտանիք պարտաւորուած է պահել մի քանի քուրդ գերդաստան նրանց անասունների հետ: Ծանրութիւնը եւ նեղութիւնը, որ կրում են հայերը այդ ինքնակոչ հիւրերից, հասնում է վերին աստիճանի անախոժութեան: Թողնենք այն, որ տանտիրոջ կացարանն իր համար եւս նեղ եւ անբաւական է, ուր մնաց որ նա աւելորդ մարդիկ ընդունէր իւր խրճիթի մէջ: Բայց անտանելին այն է, որ շատ անգամ ձմեռը տեւում է աւելի երկար քան թէ սովորականը, քուրդը սպառնում է իր պաշարը, այն ժամանակ հիւրընկալը պարտաւոր է խնամել նորան եւ նրա անասուններին, մինչեւ սարերից ձիւնը բարձրանայ, խոտերը բուսնեն, եւ նա կարողանայ այնուհետեւ ապրել աստուծոյ սեղանից: Տանուտիրոջ մի փոքր ընդդիմադրութիւնը կարող է նրա կեանքը վտանգի մէջ գցել հիւրի կողմից, որի զէնքերը մարմնի անբաժան մասն են կազմում, եւ նրանց իր կրքերին համաձայն գործածելը՝ չէ արգելում ոչ մի օրէնք եւ ոչ մի իրաւունք:

Այս կիսավայրենի ազգը, որ կառավարւում է իր բեկերով եւ շէյխերով, պահպանել է բոլոր բարբարոսական յատկութիւնները մի ժողովրդի, որ չէ